# ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ / ԻՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Դասընթացավար՝ Ամալյա Զոլյան
Գեղարքունիքի մարզի Գավառի ավագ դպրոց

# **Թեման՝** Իմ բնակավայրը / Գավառի տարածաշրջան

Նախագիծը նախատեսված է

10-12-րդ դասարանի աշակերտների համար



# Նպատակ՝

- Զարգացնել պատմական հուշարձաններից, գրավոր վավերագրերից և այլ աղբյուրներից օգտվելու, դրանք մշակելու,արդիականացնելու և հասարակությանը մատուցելու  հմտություններ
- Ձևավորել հարգանք և հետաքրքրություն սեփական ինքնության ու արմատների հանդեպ
- Ձևավորել մեդիայից օգտվելու հմտություններ և քննադատական մտածողություն
- Զարգացնել ավանդական և արդի մեդիայի, պատմական ընթացքի մեջ դրանց փոխկապակցվածության մասին գիտելիքներ:

# Վերջնարդյունք

Սովորողը ձեռք կբերի (գիտելիք)

✓ իր ծննդավայրի ծագման,նրա պատմամշակութային արժեքների,ավանդույթների և մեդիագրագիտության մասին գիտելիքներ:

Կկարողանա (կարողություն-հմտություն, դիրքորոշում,արժեք)

✓ ներկայացնել իր բնակավայրի պատմամշակութային արժեք ներկայացնող վայրերը
✓ համեմատել ավանդական և արդի մեդիայի ձևերը
✓ վերլուծել և ընդհանրացնել մեդիաաղբյուրները
✓ գնահատել համայնքին առնչվող պատմամշակութային արժեքները և ավանդույթները
✓ ստեղծել պրոդուկտ՝ հիմնված համակողմանի ուսումնասիրության վրա

# Նախագծի ընթացքը

**Պլանավորում**

Թիմի ձևավորում. դերային բաշխում

★ **հետազոտողներ** ★ **ստեղծագործ-խմբագիրներ** ★**ՏՀՏ պատասխանատուներ**

Կարիքի գնահատում . «Իմ բնակավայրը» նախագծի ուսումնասիրվող ուղղությունների հստակեցում:

- Գավառի տարածաշրջանի պատմական արժեք ներկայացնող հուշարձաններ՝ Դարի գլուխ հնավայր, Հայրավանք, Նորատուսի խաչքարեր
- Գավառի երկրագիտական թանգարան և Լևոն Քալանթարի անվան պետական թատրոն
- Գորգագործական ավանդույթներ
- Խոհանոց.Նորին գերազանցություն Բայազետի փախլավա

# Գործնական աշխատանք՝ ըստ կազմված ժամանակացույցի

- Վավերագրերի ուսումնասիրություն Գեղարքունիքի մարզային գրադարանում: Հավաքագրված վկայությունների դասակարգում և մշակում:
- Էքսկուրսիա Հայրավանք. հանդիպում տեղի քահանա տեր Բաբկենի և Տիգրան սարկավագի հետ: Հայրավանքի կամ Մարդաղավնյաց վանքի մասին հարուստ տեղեկույթի հավաքագրում, տեղանքի ուսումնասիրում:
- Էքսկուրսիա Նորատուսի խաչքարեր. աշակերտները լսում են գյուղի բնակչի պատմածը և համեմատում գրադարանի ընթերցասրահում հետազոտած նյութերի հետ:
- Այցելություն Գեղարքունիքի երկրագիտական թանգարան: Շրջայց ավագ գիտաշխատողի հետ թանգարանի սրահներում: Վկայությունների հավաքագրում:

# Գործնական աշխատանք՝ ըստ կազմված ժամանակացույցի

- Այցելություն Գավառի պետական թատրոն: Ծանոթացում ռեկվիզիտի և հանդերձարանի պաշարների հետ:Հարցազրույց թատրոնի գլխավոր ռեժիսոր Նորայր Հերգնյանի հետ՝ սովորողների կողմից վաղօրոք մշակված հարցերի շրջանակում:

- Գորգագործական ավանդույթների ուսումնասիրման նպատակով այցելություն Գավառի մանկատուն: Բրդի մշակումից մինչև գորգի ստացման գործընթացի ուսումնասիրում:

- Այցելություն փախլավայի արտադրամաս: Ծանոթացում քաղցրավենիքի պատրաստման ընթացքին:

- Նոր Բայազետի վերոնշյալ ավանդույթների մասին հարուստ տեղեկույթի հավաքագրում և համադրում թանգարանի և գրադարանի տրամադրած աղբյուրների բովանդակության հետ:

# Աշխատանք կենտրոններով

Հետազոտողներ



Ստեղծագործ-խմբագիրներ



ՏՀՏ պատասխանատուներ



# Կատարված առաջադրանքների ներկայացում

## Անդրադար ձնախազծին

- Ողջ հավաքագրված նյութը մշակվեց, ստուգվեց, վերլուծվեց, համեմատվեց ավանդական ու արդի մեդիատեղեկույթը ու լրամշակվեց սովորողների կողմից ։
- Ստեղծվեցին երեք բովանդակային նյութեր՝ ակադեմիական տեքստ, տեսադարան և տեսանյութ
- Սովորողներն իրենց ուսումնասիրության արդյունքները հայրենի Գավառ տարածաշրջանի մասին դարձրին հանրության սեփականությունը:

Ստեղծված տեսանյութի հղումը՝ https://youtu.be/5wk5SOpVn44?si=R28j_2B2vl1ND0WF

# Օգտագործված գրականություն


- Բարխուդարյան Ս., «Դիվան հայ վիմագրության», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1973

- Խորենացի Մ., «Հայոց պատմություն», «Էդիթ պրինտ» հրատարակչություն, Երևան, 2014

- Հայ առաքելական սուրբ եկեղեցու Գեղարքունյաց թեմի Գավառի համայնքային-կրթական կենտրոն, «Հայրավանքի և Նորատուսի ավանդազրույցները», 2012

- Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 5, Երևան 1979

- Հակոբյան Ս., «Հայաստանի մարզեր. Գեղարքունիքի  մարզ.պատմական հանրագիտարան», «Էդիտ Պրինտ», Երևան, 2010

- Հարությունյան Հ., « Նոր Բայազետի գավառը», ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչութուն, Երևան, 2008

- Հովեյան Հ.,«Իմ Պայազատը»,«Մուղնի» հրատարակչություն,Երևան 2013

- Մկրտչյան Լ., Դաշտոյան Գ., «Ավանդապատումներ. Խոսք ու զրույց/ Գեղարքունիք», «Աստղիկ» հրատարակչություն, Գավառ, 2020

- Պետրոսյան Հ., «Խաչքար»,«Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2015

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամ, Կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում: